# Լեռնային Ղարաբաղի ծննդատներում իրավիճակը բարդ է

Լեռնային Ղարաբաղի ծննդատներում հաճախակի են դարձել ախտաբանական երեւույթների դեպքերը: Ինչպես հաղորդեցին «ԻՖ»-ի թղթակցին, 1991 թ. Ստեփանակերտում արձանագրվել է 3 դեպք, երբ երեխաները ծնվում են ֆիզիկական շեղումներով: Նորածինները ծնվել են վզին փաթաթված պորտալարով: Նախկինում դա եղել է շատ հազվադեպ երեւույթ: Մասնագետների վկայությամբ, դա մոր հոգեկան վիճակի խախտման հետեւանք է, որը կապում են նաեւ հասարակական-քաղաքական բարդ իրավիճակի հետ:

Դրա հետ մեկտեղ, ղարաբաղցի բժիշկների ջանքերով, 1990 թ. եւ 1991 թ. մանկական մահացությունը Լեռնային Ղարաբաղում բավականին նվազել է: Վերջին 3 տարիներին ծննդաբերության ժամանակ մոր մահացության ոչ մի դեպք չի արձանագրվել: ■